

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 505-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագրի առաջընթացի

1. Որոշման N 2 հավելվածի 2-րդ կետի («Տարածական տվյալների կառավարման (ԵՏՀ/ GIS) մասնագետների վերապատրաստում» ժամկետ՝ 2022 թվականի դեկտեմբերի 1-ին տասնօրյակ) ապահովման նպատակով՝ 50-ից ավել մասնագետներ (Կոմիտեի աշխատակիցների) վերապատրաստվել են՝ ձեռք բերելով (GIS՝ Աշխարհագրական տեղեկատվական համակարգ) ԱՏՀ տեխնոլոգիայի կիրառման ոլորտում նոր գիտելիքներ և հմտություններ: Դասընթացի ընթացքում աշխատակիցները ամրապնդել են տարածական տվյալների կառավարման վերաբերյալ տեսական և կիրառական գիտելիքները, ծանոթացել աշխարհագրական տեղեկատվական համակարգերի և հեռազննման տեխնոլոգիաների տեսական և գործնական հիմունքներին: Դասընթացների բովանդակությանը համապատասխան կազմվել են ձեռնարկներ:

2. Որոշման N 2 հավելվածի 3-րդ կետի («Բազային տարածական տվյալների շտեմարանի ճշգրտում, արդիականացում, օպտիմալացում և ստանդարտացում» ժամկետ՝ 2022-2026 թվականների դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ (շարունակական)) ապահովման նպատակով ազգային գեոպորտալ մուտքագրելու համար իրականացվել են ՀՀ Արարատի, Արմավիրի, Շիրակի մարզերի բազային քարտեզագրական՝ շենք-շինության, ջրագրության, հիդրոտեխնիկական և ճանապարհային շերտերի կամերալ եղանակով թվայնացման աշխատանքներ՝ հիմք ընդունելով օրթոֆոտոլուսանկարները: Ընթացքի մեջ են արդեն իսկ թվայնացված շերտերը ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման պահանջներին համապատասխանեցնելու աշխատանքները: Բազային քարտեզագրական շերտերի ճշգրտման շրջանակներում, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի դրույթներին համապատասխան իրականացվել են նաև ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերի և ՀՀ

Սյունիքի մարզի Միսիան խոշորացված համայնքի 158 բնակավայրերի կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքներ:

Տեղի է ունեցել համագործակցություն «Հայաստան. աջակցություն ազգային ստանդարտացված տարածական տվյալների ենթակառուցվածքի ստեղծմանը» Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ «LX Korea» ընկերության հետ: Մշակվել են տարածական տվյալներին առնչվող 12 ազգային ստանդարտների նախագծերը, ինչպես նաև կազմվել է ազգային գեոպորտալի զարգացման նախագիծը:

3. Որոշման N 2 հավելվածի 4-րդ կետի («Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի տեղեկատվական համակարգի արդիականացում և թարմացում» ժամկետ՝ 2022 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով ՀՀ 907 բնակավայրերի կադաստրային քարտեզները ARPAC համակարգից տեղափոխվել են քարտեզագրական մոդուլ:

4. Որոշման N 2 հավելվածի 8-րդ կետի («Անհրաժեշտության դեպքում նոր կարգավորումների, այդ թվում՝ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ստանդարտների, նախագծերի մշակում» ժամկետ՝ 2021 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» 1569-Ն որոշումը: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2023 թվականի հունվարի 17-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին» ՀՕ-20-Ն, «Տարածական տվյալների մասին» ՀՕ-21-Ն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-22-Ն, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-23-Ն ՀՀ օրենքների փաթեթը:

5. Որոշման N 2 հավելվածի 12-րդ կետի («Գեոպորտալի և մետատվյալների շտեմարանի ներդրում և լիարժեք վերագործարկում» ժամկետ՝ 2023 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ) ապահովման նպատակով ընդունվել է Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի մարտի 31-ի «Մետատվյալների ստեղծման և թարմացման կանոնները սահմանելու մասին» N 76-Ն հրամանը:

2022 թվականի հուլիսի 29-ին գործարկվել է ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի բաղկացուցիչ մաս կազմող ՀՀ ազգային գեոպորտալը՝

geoportal.am, որի «Մետատվյալների կատալոգ» մոդուլում մուտքագրված են Կադաստրի կոմիտեում առկա 600-ից ավելի վեկտորային և ուստերային տարածական տվյալների վերաբերյալ մետատվյալներ, որոնք շարունակաբար թարմացվում և ավելացվում են: «Մետատվյալների կատալոգ» մոդուլը հնարավորություն ունի ստեղծելու և որոնելու մետատվյալներ: Գործարկվել է նաև ազգային գեոպորտալի մաս կազմող maparmenia.am հարթակը, որտեղ արտացոլված են գետային ցանցը, լճերը, ճանապարհները, ռելիեֆը, կադաստրային քարտեզները, օրթոֆոտոհատակագծերը: Այդ շերտերը հասանելի են հանրությանը առցանց հարթակում գրանցվելու դեպքում: Բացի քարտեզի վիզուալիզացիայից՝ օգտվողը կարող է իրականացնել որևէ հողամասի վերաբերյալ նախնական աշխարհատարածական վերլուծություններ, օրինակ՝ տեսնել հողամասի տեղադիրքը, չափել հեռավորությունը մայրուղուց, տեսնել ռելիեֆի խտությունը և այլն: Հարթակը անընդհատ արդիականացվում է. ավելանում են նոր շերտեր և տարատեսակ վերլուծությունների հնարավորություններ:

6. Որոշման N 2 հավելվածի 13-րդ կետի («Հասցեների միասնական ռեեստրի և USSԵ-ի ինտեգրում» ժամկետ՝ 2026 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ) ապահովման շրջանակներում հասցեների ռեեստրի ինքնաշխատ (ավտոմատացված) տեղեկատվական համակարգի ստեղծման և հասցեների ճշգրտման նպատակով Կադաստրի կոմիտեի հատուկ էլեկտրոնային հարթակի միջոցով ՀՀ բոլոր համայնքներ են ուղարկվել այդ համայնքների բնակավայրերի հասցեավորված գույքերի՝ Կադաստրի կոմիտեում առկա հասցեների ցանկը՝ դրանցում առկա տվյալները համայնքների տվյալների հետ համեմատելու համար: Ներկայումս համայնքներից վերադարձվել է ՀՀ շուրջ 834 բնակավայրերի վերաբերյալ տեղեկատվություն: Ստացված տեղեկատվական բազան հիմք է հանդիսանալու միասնական հասցեների ռեեստրի համակարգի ստեղծման համար: